## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 13-Լ

«24» 01 2025թ.

ք. Երևան

### ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազ Ժորա Բենիկի Թովմասյանին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնին փոխադրելու և Գևորգ Վաղարշակի Գևորգյանին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2025 թվականի հունվարի 10-ի համապատասխանաբար՝ 17-Ա և 18-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Ժ. Թովմասյանի կողմից՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Գ. Գևորգյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Արամյան Արամ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Պողոսյան Տիգրան - Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ

| | |
|---|---|
| Առաքելյան Ռուբեն - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար |
| Մանուկյան Լիաննա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Գաբոյան Հայկուշ - | Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի փետրվարի 17-ը:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**